Իրավաբանական անձի գործունեության վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն, ինչպես նաև ՀԳՄ-ի կողմից մատուցվող համապատասխանության գնահատման ծառայությունների նկարագիրը

«ՀԱՅՍԵՐՏ» ՍՊ ընկերությունը հիմնադրվել է 2024թ. ապրիլին: Ընկերությունը համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ (Իրավաբանական անձի պետական գրանցման համարը 237.110.1383117, գրանցման ամսաթիվը 17.04.2024թ.):

Իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար՝ տնօրեն՝ Հայկուհի Հենիկի Մարտիրոսյան:

Ընկերության գտնվելու և արտադրանքի սերտիֆիկացման մարմնի գործունեություն իրականացման վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Սարգիս Բաղդասարյան փ., տ. 14 հասցեն է:

Ընկերության կազմում կազմավորվել է արտադրանքի սերտիֆիկացման մարմին, որտեղ հավատարմագրվելուց հետո իրականացվելու են ՀՀ կառավարության 15.12.2005թ. N 2228-Ն և 23.11.2006թ. N 1922-Ն որոշումների և ՄՄ ՏԿ 004/2011, ՄՄ ՏԿ 020/2011, ԵԱՏՄ ՏԿ 037/2016 տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխան սերտիֆիկացման և համապատասխանության հայտարարագրերի իրականացման աշխատանքներ: Արտադրանքի սերտիֆիկացման մարմինն իր գործունեությունն իրականացնելու համար ունի համապատասխան տարածք, որակավորված անձնակազմ, ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17065-2013 պահանջներով ներդրված կառավարման համակարգ և նշված ստանդարտով պահանջվող փաստաթղթեր:

«ՀԱՅՍԵՐՏ» ՍՊ ընկերությունը չի հանդիսանում իր հավատարմագրման ոլորտում ընդգրկված արտադրանքի նախագծող, արտադրող, բաշխող, սպասարկող, չի իրականացում իր պատվիրատուների ներքին աուդիտ կամ կառավարման համակարգի խորհրդատվություն:

Արտադրանքի սերտիֆիկացման մարմինն իր աշխատանքներն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում գործող իրավական ակտերի, ազգային և միջպետական ստանդարտների ու տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխան:

«ՀԱՅՍԵՐՏ» ՍՊԸ տնօրեն՝ Հ. Մարտիրոսյան

30.06.2025թ.